

ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ

Աննա Մարոյան

Ավ. Բսահակյանի տուն-թանգարան

Orcid ID 0009-0007-3694-3694-1100

Anna.saroyan87@gmail.com

DOI: 10.54503/1829-0116-2023.2-178

ԵՐԿՈՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՊՈԵՏՆԵՐ

Բանալի բառեր - արվեստ, պոեզիա, Լուվրի թանգարան, Բսահակյան, Փարիզ, Յվետանա, սրբապատկեր:

Հոդվածը փորձ է ռուս մեծ բանաստեղծ՝ Մարինա Յվետանայի դստեր՝ Արիանդա Էֆ-րոնի հուշերի և Ավ. Բսահակյանի որդու՝ Վիգեն Բսահակյանի «Հայրս» գրքում բերված փարիզյան հուշերի հիման վրա վերլուծել-վերապատմել 1932 թ. Փարիզում տեղի ունեցած Բսահակյան-Յվետանա մի շարք անմոռանալի հանդիպումները: Ազգային հանճարները բնության պարզուն են տվյալ ժողովրդին և, անշուշտ, Մ. Յվետանայի և Ավ. Բսահակյանի անուններին առնչվող յուրաքանչյուր դրվագ, յուրաքանչյուր պատմություն կարևոր ուրվագծեր, կարևոր դի-տարկումներ ունի՝ կապված այդ մեծ ստեղծագործողների թե՛ մարդկային ճակատագրերի, թե՛ մշակույթի հանդեպ տաժաժ մտորումների, տեսակետների հետ:

Հնչողությունը վերլուծելիս փորձել եմ ներկայացնել այդ չխամրող հանդիպման կարևոր պահերը, ինչպես նաև նրանց արտահայտած կարծիքներն իրենց սեփական ստեղծագործության և արվեստի արժեքների գնահատման, ընկալման վերաբերյալ:

Anna Saroyan

Дом-музей Аветика Исаакяна

Orcid ID 0009-0007-3694-3694-1100

Anna.saroyan87@gmail.com

ДВЕ ГОРНЫЕ ПОЭТЫ

Ключевые слова - искусство, поэзия, Музей Лувра, Исаакян, Париж, Цветаева, икона .

Статья представляет собой эксперимент с мемуарами Арианды Эфрон, дочери великой русской поэтессы Марины Цветаевой основанный на парижских воспоминаниях, приведенных в книге сына Ав. Исаакяна Виген Исаакяна “Мой отец”. Целью статьи является анализ и пересказ национальных гениев дар природы данному народу в 1932 году. Каждый эпизод, каждая история, связанная с именами Цветаевой и Исаакяна, включает в себе важные черты и наблюдения, связанные с этими великими творцами, как с их человеческими судьбами, так и с размышлениями, взглядами на культуру, и оценками ценностей искусства.

Anna Saroyan

House-museum of Avetik Isahakyan

Orcid ID 0009-0007-3694-3694-1100 Anna.saroyan87@gmail.com

TWO MOUNTAIN POETS

Keywords - art, poetry, Louvre Museum, Isaakyan, Paris, Tsvetaeva, icon .

The article is an experiment with the memoirs of Arianda Efron, the daughter of the great Russian poet Marina Tsvetaeva, centered around her memories of Paris .These memoirs are presented

in the book "My Father" by Vigen Isahakyan, the son of Avetik Isahakyan. The main objective of the article is to analyze and retell the remarkable contributions of national geniuses to their nation in 1932. Each episode and story associated with the names of Tsvetaeva and Isahakyan holds significant insights, shedding light not only on their artistic prowess but also on their personal lives and profound perspectives on culture.

Ավ. Իսահակյանի տարագրության վերջին շրջանը փարիզյանն է՝ 1930-1936 թվականները: Այդ տարիներին Փարիզն ապրում էր անվրդով և հետաքրքիր կյանքով, որը եվրոպական գրականության մեջ հայտնի է «խենթ տարիներ» բնորոշմամբ:

Փարիզը նաև հայ և ռուս վտարանդիների կենտրոն էր դարձել:

1930-1936 թ.՝ վերջնականապես հայրենիք վերադառնալուց առաջ, Իսահակյանն ապրում է Եվրոպայում: Փարիզում էին գտնվում բանաստեղծի կինը՝ Սոֆյա Իսահակյանը (Քոչարյանց) և որդին՝ Վիգեն Իսահակյանը: Այդ տարիներին Փարիզում էին հավաքվել Եվրոպայի, Ամերիկայի, ինչպես նաև Հայաստանի և Ռուսաստանի բազմաթիվ վտարանդիներ: Այստեղ էին ռուս անվանի գրողներ Իվան Բունինը, Ալեքսեյ Տոլստոյը, Ալեքսեյ Ռեմիզովը, Կոնստանտին Բալմոնտը, Ալեքսանդր Կուպրինը, Մարինա Ցվետանան և շատ ուրիշներ: Գրականագետ Ավիկ Իսահակյանն իր «Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը» (1984 թ.) գրքում գրում է. «Իսահակյանը համարյա բոլորին անձամբ ճանաչում էր և հաճախ հանդիպում էր նրանց Փարիզի Վալդը Գրաս փողոցի ռուսական գրադարանում, այսպես կոչված, «Էմիգրանտ ռուս գրողների ասոցիացիայում» և, իհարկե, Մոնպարնասի հայտնի «Կլոգերի դե Լիլա» սրճարանում, ուր ավանդական մի բաժակ սուրճի շուրջը ժամերով վեճի ու զրույցի էին բռնվում: Կիրակի ցերեկները Իսահակյանը հաճախ լինում էր Ռյուի Դարյա փողոցի ռուսական ուղղափառ եկեղեցու Ալեքսանդր Նևսկի տաճարում, ուր սիրում էր ունկնդրել դեռևս մանկության օրերից իրեն լավ ծանոթ ռուսական երաժշտությունը: Նույն եկեղեցու բակում նա սովորաբար հանդիպում էր իրեն ծանոթ ռուս ընկերներին, երբեմն էլ հրավիրվում ավանդական թեյասեղանի՝ ծանոթ մտավորականներից որևէ մեկի տանը» (Իսահակյան, 1984, էջ 116-117):

Փարիզի Դանֆեր-Ռոշրո փողոցում ապրելիս են եղել Իսահակյանը և Փարիզում լույս տեսնող ռուսական ամսագրի խմբագիր Վ. Ի. Լեբեդևը: Իսահակյանը Լեբեդևի հետ վաղուց էր ծանոթ և հաճախ էր հյուր լինում նրան: Ահա, հենց նրանց տանը 1932 թ. աշնանը Իսահակյանը ծանոթանում է Մարինա Ցվետանայի հետ: Բանաստեղծուհու դուստրը՝ Արիադնան, որ ներկա էր այդ հանդիպմանը, իր հուշերում գրում է այս հանդիպման մասին: 1967 թ. «Գրական Հայաստան» (Литературная Армения) ամսագրի ութերորդ համարում լույս է տեսնում Արիադնա Էֆրոնի «Մամոթթակյան հաղթանակ» հուշ-հոդվածը: Հոդվածն առաջին անգամ ամբողջությամբ հայերենով թարգմանված՝ ներկայացնում են ստորև:

«Մարինա Յվետանան և Ավետիք Իսահակյանն առաջին անգամ հանդիպել են Փարիզում՝ 1932 թ. աշնանը՝ Վլադիմիր Իվանովիչի և Մարգարիտա Նիոլաննա Լեբեդևների տանը, ովքեր ապրում էին Դաֆներ-Ռոշրո ստվերոտ փողոցում, որը սկիզբ էր առնում Մոնպարնասի և Ռասպայի բուլվարներից ու ընկղմվում Ման-Միշել բուլվարի կանաչների մեջ: Դա մի գողտրիկ անկյուն էր, հին շենքերով ու վիթխարահասակ, ստվերախիտ շագանակի ծառերով՝ ընկած նկարիչների և ուսանողների աղմուկոտ թաղամասի արանքը: Մի անգամ, երբ Յվետանային հարցրին, թե Փարիզում ամենաշատը ո՞ր վայրն է սիրում, բոլորի համար շատ անսպասելի նա պատասխանեց, որ հենց այս աննկարագրելի փողոցը՝ իր գողտրիկության և Լեբեդևների համար...

Իսահակյանը և Լեբեդևը ծանոթ էին վաղուց: Այդ աշնանային օրը՝ 1932 թվականին, Իսահակյանը Լեբեդևների ճաշասեղանի մոտ նստել էր ոչ իբրև նոր հյուր. նա գրուցում էր տանտերերի հետ: Ե՛վ իր անձը, և՛ բառերը թվում էին ինձ ծանոթ և էլի շատ ծանոթ, կամ էլ այդ բնորոշ էր հենց Իսահակյանին՝ զուսպ և անկաշկանդ: Ես հնարավորություն ունեցա նրան հանդիպելու ևս մի քանի անգամ այլ միջավայրում և նա մշտապես լրջորեն էր նայում ամենքին և ամեն ինչին, ազատ և առանց հետաքրքրասիրության, կարծես ամեն ինչ արդեն լսել էր և տեսել, թվում էր՝ ոչինչ նոր և առաջին անգամը չէ:

Ե՛վ դա հենց այդպես էլ կար:

Յվետանան այդ օրը զուսպ էր, ինչպես ամեն մի նոր ծանոթության ժամանակ: Երբեմն իրեն հեռու էր պահում, երբեմն էլ բացվում մանկական պարզությամբ, բայց ոչ երբեք առաջին հայացքից: Այո՛, և հենց առաջին հայացքից իր վառ կանաչ աչքերը միանգամից չէր նվիրում: Նա նախ գրուցակցին էր լսում՝ աչքերը ներքև խոնարհած. մի փոքր խոպոտություն կար ձայնի մեջ, փորձում էր ըմբռնել բառերի թաքնված իմաստը: Ընկերոջը լսելիս հարցեր էր տալիս ու պատասխանում սառը, հակիրճ և շատ քաղաքավարի: Դա խաբուսիկ սառնություն էր և վտանգավոր քաղաքավարություն, անվստահելի քողարկում, որի հետևանքով ցանկացած պահի կարող էր շողարձակել բոցավառ լեզուն:

Զրույցը, ինչպես և պատշաճ էր ընթրիքին, ամեն ինչի մասին էր և ոչնչի, կարծես այն ընթանում էր առանց վնասելու բանաստեղծներին, հետո սկսվեց ընդհանուր ծանոթների, ընկերության, հակումների և հակակրանքների փոխադարձ հետախուզում: Հիշում եմ, թե ինչպես զրույցի ընթացքում հնչեց Իսահակյանի և Յվետանայի ընկերոջ անունը՝ Սալոմե Անդրոնիկովնա-Գալպերն, վրացիներ, պետերբուրգցիներ և փարիզուհիներ, որոնց մասին Իսահակյանն ասաց, որ այդ տեսակի կանայք ծնվում են հարյուրամյակը մեկ, և հենց միայն նրա համար, որպեսզի հավերժանան, և երգվի նրանց մասին:

Իհարկե, Սալոմեից հետո հայտնվեց Օ. Մանդելշտամը՝ իրեն նվիր-

ված «Ծղոտ»-ով և պատմությունը՝ «Մի նախաձեռնության պատմություն»։ («Литературная Армения», 1967, N 8, с. 81. Ариадна Эфрон, Самофракийская победа)

Հանդիպման ընթացքում բուռն խոսքուզրույց է ծագում։ Երկու պոետներն անդրադառնում են նաև Բալմոնտի ստեղծագործություններին՝ նրան համարելով «Աստծո շնորհով» օժտված բանաստեղծ (Բալմոնտը թարգմանել է Ավ. Բասիակյանի երկերից, որոնք ամփոփված են 1916 թ. Վ. Բրյուսովի կազմած «Հայաստանի պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» ռուսերեն հատընտիրում)։

Բանաստեղծուհու դուստրն իր հուշերում այսպես է գրում. «Որքան գեղեցիկ էին նրանք երկուսն էլ՝ Բասիակյանն ունկնդրելիս, Յվետանան արտասանելիս, և որքան նման էին իրենց կերպարների ավարտվածությանը։ Նրա հոյակապ ու խոշոր գլուխը՝ կովկասցու ընդգծված դիմագծերով, արծվաքիթ, ծանր, դարչնագույն կոպերի տակ թաքնված արծվային հայացքը, երեսի թուխ գունատությունը, փոքր-քիչ կորացնող, պարկանման բաձկոնի տակից զգացվող նրա պինդ կոնակն ու թիկնեղ ուսերը, ափերի ամրությունն ու մատների նյարդայնությունը. այս ամենն ստեղծում էր նրա կերպարի դարավոր հոգնածությունը։

Եվ նա՝ Յվետանան, տղավարի, հպարտորեն բարձր պահած գլխով, կարճ ու թեթև մազերով, ուղիղ, կորաքիթ դիմագծով, ընդգծված բերանն ու դեմքի գունատությունը, ասես լուսնի շողքով լուսավորված, և զարմանքով բացված աչքերը. օ՛, որքան անզեն էր նա, բայց ինչպես էր զինաթափ անում դիմացինին աչքերի մեջ նայելիս։ Անօրյա աշխատանքից մեկընդմիջտ կոշտացած նրա ձեռքերը՝ մատներին արծաթյա մատանիներ և նրա եգիպտական կեցվածքը։

Երկուսն էլ տարիքից մեծ էին երևում և երկուսն էլ հոյակապ էին։ Հետո Յվետանայի համառ ու թախանձագին խնդրանքով Բասիակյանը մայրենի լեզվով սկսում է արտասանել իր ստեղծագործություններից, ինչը մենք լսում էինք կյանքում առաջին անգամ։ Արտասանում էր կանգնած՝ ի պատիվ կանանց և պոեզիայի։ Եվ ամենքը պապանձվել էին նրա ձայնի հնչյուններից... Երբ նա ավարտեց, տիրեց խլացուցիչ լռություն, ինչպես լինում է պայթյունից հետո։

-Աստվա՛ծ իմ, դուք իսկական լեռնային պոետ եք,- բացականչեց Յվետանան։

-Ձեզ էլ չես անվանի հարթավայրային պոետ,- պատասխանեց Բասիակյանը» (Ա. Զֆ-րոն, “О Марине Цветаевой: Воспоминание дочери”, Москва, 1989, с. 483)։

Այնուհետև Ա. Էֆրոնը շարունակում է. «Զրուցում էին Վլադիմիր Իվանովիչի սենյակում, որը նայում էր փողոցին։ Յվետանան պատուհանի մոտ կանգնած նայում էր նրան՝ սկզբում ցրված, հետո ինչ-որ հետաքրքրություն առաջացավ. պայուսակից հանեց իր հին լորնետը (նա կար-

ճատեսություն ուներ), ապա ինչ-որ բանում համոզվելով կանչեց Իսահակյանին . «Նայեցե՛ք»...

Պատուհանից, ինչպես ափի մեջ, երևում էր խուլ ու համրերի ապաստարանը՝ կտրված բլրի գագաթին, որը շրջապատված էր հենց այն պատով, որը Դանֆեր-Ռոշրո փողոցին ինքնատիպ ձանձրույթ էր հաղորդում, ինչպես կենդանաբանական այգուն՝ մանկատունը: Պատի վրա ցատկոտում և անխոս թռչկոտում էին դեռահաս տղաներ: Նրանց ձեռքերը՝ ուսերից մինչև մատների ծայրերը անդադար շարժման մեջ էին և թվում էր՝ տեղից կպոկվեն: Աղավաղված էին նրանց հուսահատ դեմքերը, ամեն ինչ չափազանց սարսափելի էր...

-Ահա՛ այսպես եմ ես տեսնում բալետը,- անմեղ ասաց Յվետանան,- կամ, եթե ստիպես «նրանց» սառեցնել քանդակը: Արվեստը իմ չափանիշը չէ:

Մի քանի օրից նրանք հանդիպում են Լուվրում: Իսահակյանը ցանկանում էր «վրեժ» լուծել «Խուլուհամրերի» համար: Յվետանան պատրաստակամորեն համաձայնեց՝ միայն մի պայմանով, որ վրեժը կարճ լինի, բաց ոչ դաժան: Իսահակյանը երդվեց:

Ես մորս հետ գնացի՝ օգնելու նրան գտնել թանգարան-պալատի գլխավոր մուտքը, որտեղ յուրաքանչյուր ֆրանսիացի թագավոր իր թևն ուներ՝ իր սեփական տոնական մուտքով, որտեղ խճճվելը զարմանալի չէր...

Իսահակյանը մեզ արդեն սպասում էր ընդարձակ, տաճարաձև նախասրահում, որն ամբողջությամբ ամայի էր: Միայն ձախ անկյունում մի ծեր կին ինչ-որ բան էր գործում արտասահմանցիների համար, որը ոչ մի կերպ չէր գրավում օտարերկրացիներին:

Այս փառաբանված արվեստի համաշխարհային պահոց (որը դժվար է պատկերացնել հիմա մեզ մոտ) այցելուները գալիս էին միայն անվճար օրերին՝ հինգշաբթի և կիրակի, դա էլ քիչ է՝ ամերիկացիներ էին հայտնվում՝ գիդերի ուղեկցությամբ:

Աջ անկյունում ուղեկցորդն էր:

Մենք գնացինք Դենոնայի պատկերասրահի երկայնքով՝ առանց կանգ առնելու, անցանք հսկա սարկոֆագների մեջտեղով, որոնք զարդարված էին պարող աստվածուհիներով, զորեղ առյուծներով, մարդաձկներով և ծովահարսներով («Միայն թե ձեր շուրջը մի՛ նայեք Մարինա Իվանովնա»): Նրանք քայլում էին դագաղանման ցուցափեղկերի կողքով... քայլում մինչև թանգարանային Հադեսն ուղեկցեց մեզ:

Իսահակյանը և Յվետանան առջևում էին, ինչպես Օրփեոսը և Էվրիդիկե, դեպի հոյակերտ մարմարե կասկադի «Մեծ սանդուղքը», որը տանում էր դեպի կերպարվեստի սրահ:

Այդ խճանկարներով զարդարված սանդուղքն ինքնին հրաշալի էր, բայց գլխավոր հրաշքն այն էր, որ իր բարձրության ողջ ներդաշնակու-

թյամբ և խստությամբ, լույսի և ստվերի պայծառ փոփոխությամբ ծառայում էր վերին հարթակում կանգնած պատվանդանին:

Դա Սամոթրակյան հաղթանակի արձանն էր. Բասիակյանը նրա մոտ տարավ Յվետանային և կանգնեցրեց՝ նրա ուսին դնելով ձեռքը, որովհետև հաղթանակն այնքան մեծ էր, որ հեշտ էր անգամ սկիզբը շրջանցել՝ առանց վերև նայելու:

Անգլուխ և անձեռք, քրիստոնեական բարբարոսությունից խեղված, հազարամյակների ընթացքում ծեծված և պոկված, ցնծացող աստվածուհին կանգ առավ, որպեսզի գոռա հաղթանակի մասին: Մ. թ. ա. 300 տարի առաջ քամին, որ խեղդում էր նրա երիտասարդ, հաղթական մարմինը՝ հագուստի ծալքերով, որը խոնավ և ծանրացած էր՝ ցնցվեց նրա լայն տարածված թևերի և մարմարե փետուրների վրայով:

Նրա մեջ ամեն ինչ շարժում էր, առաձգականություն, ձգտում: Ամեն ինչ կենդանի էր, ամբողջական և անդիմադրելի այդ կազմվածքի համար: Եվ շրթունքներին՝ անտեսանելի շեփոք, որը դարեր շարունակ ազդարարեց մարդկային ոգու հավերժական հաղթանակը, քաջությունը, հանճարը:

-Դե, ինչպե՞ս էր Մարինա Իվանովնա,- հարցրեց Բասիակյանը:

-Ես նրան վաղուց եմ ճանաչում և սիրում,- պատասխանեց նա՝ շոյելով քարե կտորի մանր, մի քիչ էլ դեղնավուն մակերեսը:

-Եվ այնուամենայնիվ «Ի սկզբանե էր Բանն», -ասաց նա և լռեց» («Литературная Армения», 1967, N 8, с. 84):

Այնուհետև եղան ևս մի քանի հանդիպումներ: Բասիակյանը մեկնում է Մեդոն՝ Փարիզից ոչ հեռու արվարձան, որտեղ ապրում էր Յվետանան: Մյուս հանդիպումը կրկին Լեբեդևների բնականաբար էր, որտեղ էր նաև Կ. Բալմոնտը: Բասիակյանը եղբայրաբար գրկախառնվում է նրա հետ, ուշադիր և համբերատար լսում հիվանդ Բալմոնտի զառանցանքային խոսակցությունները:

Ավ. Բասիակյանի որդին՝ Վիգեն Բասիակյանը ևս պատմում է Վարպետի և Յվետանայի հանդիպման մասին՝ նշանավոր «Կլոգերի դե Լիլա» սրճարանում. «Ուղևորվում եմ Մոնպարնաս. սրճարանի տերրասում տեսա հորս՝ մի քանի մարդկանց հետ նստած: Մոտեցա, բարևեցի նրանց. մեկը պրոֆեսոր Լեբեդևն էր՝ դեռևս Ժնևից ծանոթ, մյուսը՝ մի բավական գեղեցիկ կին՝ բանաստեղծուհի Մարինա Յվետանան էր. նրան տեսել էի արդեն ռուսական «Կոչևոյ» ակումբում, ուր հայրս հաճախ էր գնում՝ հանդիպելու Փարիզ գաղթած ռուս նշանավոր գրողներին...

Հայրս կանչեց, նստեցի. խոսում էին ֆրանսերեն՝ ռուսերենը խառնելով: Խոսում էին դեսից-դենից, գրականությունից, քաղաքականությունից: Յվետանան հարցրեց հորս. «Ավետիք Սահակովիչ, ինչպե՞ս եք ձեզ զգում այստեղ, հայկական էմիգրացիան ինչպե՞ս է վերաբերվում ձեզ»: Հայրս պատասխանեց, որ զանգատվելու բան չունի, բոլորը հարգում են

իրեն, սիրում: Ցվետսևան ասաց. «Իմ վիճակը բոլորովին տարբեր է, մանավանդ այն օրվանից, երբ ես ու ամուսինս՝ Սերգեյ Էֆրոնը, հեռացանք ռուս գրական վտարանդիության այն շրջանից, որը համախմբվել էր Ղուկասովին պատկանող «Վոզրոժդենիե» միապետական թերթի շուրջ: Սրան հարկ է ավելացնել ընտանեկան հոգսերս, ունեմ 6 տարեկան մի տղա և երկու մեծ աղջիկ: Հիմա ես ու Էֆրոնը հակվել ենք «Եվրոասիա» կոչվող ռուս մտավորականության մի ընկերակցության, որի նպատակն է Ռուսաստանի և Ասիայի մշակույթների մերձեցումը Եվրոպային: Էֆրոնը, ավելի հեռու գնալով, հիմնել է իր սեփական խմբավորումը՝ «Եվրոասիայի» ձախ թևը, որն ունի իր թերթը, քարոզում է Խորհրդային Միության նվաճումները, պաշտպանում է նրան տարբեր հերյուրանքներից, վատաբանողներից:

«Հայրենիք վերադարձի» գաղափարը ձևավորվել էր ռուսական այդ միության մեջ: Ես ու Էֆրոնը համոզված ենք, որ այժմ Ռուսաստանի ապագան, ուժը, իրավունքը սովետների ձեռքում է»:

Մարինա Ցվետսևան շարունակեց մի առանձին հուզմունքով ու վճռականությամբ. «Ես կվերադառնամ ոչ որպես անառակ զավակ, այլ հարազատի նման: Իսկ եթե իմ ճակատագիրն է՝ մեռնել հայրենիքում, ապա կուզենայի հանգչել Տարուսում՝ նրա փոքր, մացառոտ գերեզմանոցում, որը բլրակի բարձրությունից նայում է ներքևում հոսող Օկա գետի ջրերին: Այնտեղ՝ Տարուսում, հայրս ուներ մի փոքր տուն, որտեղ մանկությունս եմ անցկացրել: Նման երջանիկ մանկություն չեմ կարող նորից պատկերացնել, ա՛խ, այն ոսկի օրերը, ինչքա՛ն հեռու են աստված իմ, ինչքա՛ն հեռու...» (Վ. Իսահակյան, «Հայրս», Երևան, 2011, էջ 288-289):

Ցվետսևան, ամուսինը և զավակները 1939 թ. վերադարձան Խորհրդային Միություն: Մակայն դժվար և դաժան ժամանակներ էին, ստալինյան բռնապետությունն ամենուր էր: Էֆրոնը բանտարկվեց, իսկ քիչ անց նաև Արիադնան՝ բանաստեղծուհու դուստրը: Մարինան երկու տարի ապրեց Մոսկվայում բոլորից անտեսված. գոյությունը պաշտպանելու համար թարգմանություններ էր անում: 1941 թվին՝ պատերազմն սկսվելիս, տարահանվեց Ելաբուգա՝ մի փոքրիկ գյուղ Կամա գետի ափին, սակայն դժբախտ կինն այնտեղ միայն 10 օր ապրեց: Հուսահատված վերջ դրեց կյանքին, երբ հազիվ 49 տարեկան էր: Գերեզմանի տեղն էլ հայտնի չէ:

Արիադնա Էֆրոնն այսպես է եզրափակում երկու լեռնային պոետների հանդիպման մասին հուշերը. «...Իսկ հիմա ինձ համար դժվար, գրեթե անհնար է պատմել նրանց մասին միայն այն պատճառով, որ ո՛չ Ցվետսևան, ո՛չ Իսահակյանը, ո՛չ Բալմոնտը, ո՛չ Լեբեդևները կենդանի չեն, որ նույնիսկ Դանֆեր-Ռոշրո փողոցն է փոխել անունն ու տեսքը: Միայն հիշողությանս մեջ է համընկնում շլացնող մի տեսիլք՝ երկու պոետների, պոեզիայի երկու հսկաների, Նիկե Սամոթրակյանի աշնանա-

յին անմահ թները» (О Марине Цветаевой: Воспоминание дочери, Москва 1989, 484 стр.):

Հավանաբար մի հետաքրքիր հանդիպման ժամանակ էլ Ցվետանան, ի նշան բարեկամության, Բսահակյանին նվիրել է 19-րդ դարի մի թանկարժեք ռուսական սրբապատկեր: Վարպետի թոռը՝ Ավիկ Բսահակյանը, այն խնամքով պահել և հանձնել է թանգարանին: Ավ. Բսահակյանի տուն-թանգարանում գտնվող այս հրաշալի սրբապատկերը հիացնում և զարմացնում է հայ, ռուս և օտարերկրացի այցելուներին: Սրբապատկերի վրա ռուսական երեք զորավոր սրբեր են՝ Նիկիտա Նովգորոդսկին, հրաշագործ Մակար Ժելտովոդսկին և մեծ նահատակ Նիկիտա Վելիկոմուչենիկը:

Այսպիսինն էին հայ և ռուս պոեզիայի երկու հսկաները, իսկ Մարինա Ցվետանայի՝ անգուգական այս բանաստեղծուհու կերպարը, միշտ վառ ու լուսավոր մնաց Բսահակյանի հետագա ողջ կյանքի ընթացքում:

Գրականության ցանկ

1. *Ավ. Բսահակյան*, Ավետիք Բսահակյանը և ռուս գրականությունը», Ե., 1984 :
2. *Վ. Բսահակյան*, Հայրու. Ե., 2011:
3. **А. Эфрон**, О Марине Цветаевой: Воспоминание дочери, М. 1989.
4. **А. Эфрон**, Литературная Армения, N 8, 1967 г.

References

1. **Av. Isahakyan**, Avetiq Isahakyan ev rus grakanutyun, Yerevan 1984.
2. **V. Isahakyan**, Hayrs, Yerevan 2011.
3. **Efron, Marina Tsvetaeva. Daughters' memories**, Moskow 1989
4. **Efron**, Literary Armenia, N 8, 1967

Աննա Մարոյան- *Ավ. Բսահակյանի տուն-թանգարան, ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունների ոլորտը. Ավետիք Բսահակյանի գրական ժառանգությունը, կյանքն ու գործունեությունը: Nrnak.am կայքում հրապարակել էմ «Համառոտագրությունները հայերենում» հոդվածը:*

Orcid ID 0009-0007-3694-3694-1100
Anna.saroyan87@gmail.com

Анна Сароян- Дом-музей Аветика Исаакяна,старший научный сотрудник. Сфера научных интересов: литературное наследие Аветика Исаакяна, жизнь и деятельность. На сайте nrnak.am опубликовала научную статью на тему «Сокращения на армянском языке»

Orcid ID 0009-0007-3694-3694-1100
Anna.saroyan87@gmail.com

Anna Saroyan- House-museum of Avetik Isahakyan, senior researcher. Field of scientific interests: literary heritage, life and work of Avetik Isahakyan. On the website nrnak.am has published an article on the theme “Abbreviations in Armenian language”

Orcid ID 0009-0007-3694-3694-1100
Anna.saroyan87@gmail.com

Ընդունվել է տպագրության 18.10.2023թ.: